Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 283 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի N 1033-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 25-ի N 283 որոշմամբ հաստատված Բանկի 2010 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված՝ վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

1. Ըստ ներկայացված նախահաշվի, 2010 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 4,923.4 մլն դրամ, որը գերազանցում է 2009 թվականի համար «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ օրենք) հաստատված համապատասխան ցուցանիշը 3.1%-ով կամ 146.6 մլն դրամով: 2009 թվականի համար օրենքով հաստատված վարչական ծախսերի ցուցանիշի նկատմամբ 2010 թվականի համար ծրագրավորվող համապատասխան ցուցանիշի գերազանցման հիմնական մասը՝ 95.7%-ը կամ 140.2 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին:

2. Ըստ ներկայացված նախահաշվի, 2010 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել են 4,705.0 մլն դրամ, որը գերազանցում է 2009 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը 3.1%-ով կամ 140.2 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման 2010 թվականի ծախսերի 89.7%-ը (2009 թվականի՝ 89.3%-ի դիմաց) կամ 4,220.9 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսու-

մը), պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության գծով ծախսերին, որը գերազանցում է նույն ցուցանիշի գծով 2009 թվականի համար Բանկի կողմից նախատեսված 4,077.9 մլն դրամը 3.5%-ով կամ 143.0 մլն դրամով:

2.1. Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով 2009 թվականի օրենքով հաստատված ծախսերը կազմել են 3,485.2 մլն դրամ, որի դիմաց, ըստ բացատրագրի, 2010 թվականին նախատեսվել է 3,580.9 մլն դրամ (95.7 մլն դրամ կամ 2.7% աճով): Բանկի կողմից ներկայացված բացատրության համաձայն Բանկի աշխատակիցների աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվել է՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի Բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: Գնահատականը կատարվել է, հաշվի առնելով Բանկի աշխատակիցների գործող հաստիքացուցակը և նոր գործառույթների ավելացման հետ կապված դրանում ակնկալվող աճը, ինչպես նաև աշխատակիցների առաջխաղացման գործող կանոններին համապատասխան 2009թ-ի համար սահմանված աշխատավարձի աճը, հանգստյան և տոնական օրերին վճարվելիք գումարները: Աշխատակիցների քանակի ավելացումը կապված է ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների ավելացման հետ՝ ուղղված ՀՀ-ում ֆինանսական կայունության, փողերի լվացման դեմ պայքարի ապահովմանը, ինչպես նաև 2009 թվականի աշնանը «Սյունիքի» ՏԴԿ-ի և 2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկի 3-րդ մասնաշենքի շահագործման հանձնման հետ կապված սպասարկող անձնակազմի և ՏԴԿ-ի աշխատակիցների ընդունման հետ: Աշխատավարձի 2010 թվականի հաշվարկը կատարվել է 720 աշխատակցի համար (2009 թվականի համար նախատեսված 690 աշխատակցի դիմաց):

Արդյունքում, 2010 թվականի համար կանխատեսվող ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձի 464 հազար դրամի դիմաց Բանկի միջին աշխատավարձը հաշվարկվել է 2009 թվականի համար պլանավորված 421 հազար դրամի չափով և այս հոդվածով 20010 թվականի համար նախատեսված գումարի աճը 2009 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ամբողջությամբ պայմանավորված է Բանկի աշխատակիցների քանակի ավելացմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության այլ ծախսերի գծով նախատեսված 640 մլն դրամից 330.0 մլն դրամը (2009 թվականի 320.0 մլն դրամի դիմաց) ծրագրվել է պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարելու, իսկ 310.0 մլն դրամը՝ Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերը հոգալու համար (2009 թվականի 267.7 մլն դրամի դիմաց): Հաշվարկը կատարվել է ըստ 2010 թվականի համար կանխատեսվող Բանկի հաստիքացուցակի: Հարկ է նշել, որ Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերը հոգալու համար 2010 թվականի համար Բանկի նախահաշվով նախատեսված գումարի աճը 2009 թվականի համար նախատեսվածի նկատմամբ կազմում է 15.8 %, որը շուրջ 5 անգամ գերազանցում է 2010 թվականի համար նախատեսվող վարչական ծախսերի ընդհանուր ծավալի աճի ցուցանիշը:

2.2. Ըստ բացատրագրի, 2010 թվականին գործուղման ծախսերը (ներառյալ անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը) նախատեսվում են նախորդ տարվա մակարդակին մոտ՝ 370.0 մլն դրամի չափով: 2010 թվականին կշարունակվեն Բանկի աշխատակիցների գործուղումները վե-

ռապատրաստման ծրագրերին, ուսուցողական և փորձի ուսումնասիրման այցերին մասնակցելու համար:

2.3. Բանկի 2010 թվականի ներկայացուցչական ծախսերը ևս ծրագրվել են նախորդ տարվա ծրագրային մակարդակի՝ 47.6 մլն դրամի չափով, չնայած որ նախատեսվում է ՀՀ տարածքում կազմակերպվող հատուկ ծրագրերի քանակի աճ:

2.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման և սպասարկման 2010 թվականի ծախսերը նախատեսվել են 66.5 մլն դրամի չափով, որը 2009 թվականի համար օրենքով հաստատված մակարդակը զիջում է 6.1 մլրդ դրամով կամ 8.4%-ով: 2010 թվականին Բանկի կողմից շահագործվող ավտոմեքենաների թվաքանակի աճ չի նախատեսվում: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են՝ հիմք ընդունելով 2009 թվականի Բանկի կողմից վառելիքի ձեռքբերման և ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը:

3. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2010 թվականին կկազմեն 58.1 մլն դրամ, որը 16.5%-ով կամ 8.2 մլն դրամով գերազանցում է 2009 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը: Այս խումբ ծախսերի 2010 թվականին ակնկալվող աճը 2009 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է ֆիլմի և տեսահոլովակի նկարահանման համար նախատեսված, ինչպես նաև հասարակության հետ կապերի ծառայությունների մատուցման ծրագրերի գծով ծախսերի համապատասխանաբար 5.0 մլն դրամ և 2.2 մլն դրամ աճով:

4. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2010 թվականի ծախսերը, որոնք ներառում են Բանկի շենքի մաքրության և բնականոն գործունեության ապահովման, էլեկտրասարքավորումների վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը և արխիվի կարգավորումը, Բանկի կողմից նախատեսվում են 83.4 մլն դրամի չափով, որը 1.6 մլն դրամով կամ 1.9%-ով պակաս է 2009 թվականի համար օրենքով սահմանված գումարից:

5. 2010 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 2009 թվականի ծրագրային մակարդակին մոտ՝ 61.9 մլն դրամի չափով:

6. Չնախատեսված ծախսերը, ինչպես և 2009 թվականի նախահաշվում, 2010 թվականի համար ծրագրվել են 15.0 մլն դրամի չափով:

Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2010 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 22,223.0 մլն դրամի չափով, որը 2009 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշից ավելի է 1,731.3 մլն դրամով կամ 8.4%-ով:

Մասնավորապես 2010 թվականի համար Բանկի կողմից նախատեսվում է ծրագրված կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի.

ա) 46.8%-ը կամ 10.4 մլրդ դրամն ուղղել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրմանը, այդ թվում՝

- «Հայինկասացիա» ՓԲԸ-ի մասով՝ 0.3 մլրդ դրամ,
- «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» մասով՝ 5.0 մլրդ դրամ,
- «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ-ի մասով՝ 5.0 մլրդ դրամ,
- «ԱԿՌԱ» վարկային բյուրոյի մասով՝ 0.1 մլրդ դրամ:

բ) 40.0%-ը կամ 8,890.0 մլն դրամն առանձնացնել Բանկի աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 4,740.0 մլն դրամով կամ շուրջ 2.1 անգամ գերազանցում է 2009 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը: Ընդ որում, բանկի կողմից հայտարարված մրցույթում հաղթած կազմակերպությունների կողմից ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա նախատեսվում է իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի 3-րդ մասնաշենքի, Դիլիջանի ՏԴԿ-ի և հարակից ենթակառուցվածքների կառուցման հետ կապված աշխատանքները: Այդ աշխատանքների կազմում Դիլիջանի ֆինանսաբանկային համալիրի կառուցման նպատակով նախատեսվել է 6.63 մլրդ դրամ, իսկ ՀՀ կենտրոնական բանկի III մասնաշենքի աշխատանքները 2010 թվականին ավարտելու համար՝ 2.26 մլրդ դրամ:

գ) 13.2%-ը կամ 2,943.0 մլն դրամ առանձնացնել համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների, Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ (այդ թվում՝ անվտանգության ապահովման համար) հիմնական միջոցների ձեռքբերման, ինչպես նաև վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումների համար: Նշված գումարը 891.3 մլն դրամով կամ 43.4 %-ով գերազանցում է 2009 թվականի համար օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը:

Վերը նշված խումբ ծախսերի ծրագրված գումարով նախատեսվում է ձեռք բերել՝

- 1,188.5 մլն դրամի համակարգչային տեխնիկա (կազմում է այս խումբ ծախսերի 40.4%-ը): 2010 թվականի համար նախատեսված գումարը 2009 թվականի ծրագրային մակարդակը գերազանցում է 313.8 մլն դրամով կամ 35.9 %-ով,
- 1,164.7 մլն դրամի էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 39.6%-ը), 2009 թվականի ծրագրային մակարդակը գերազանցում է 269.8 մլն դրամով կամ 30.1%-ով,
- 542.3 մլն դրամի գրասենյակային գույք, կապի միջոցներ և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 18.4%-ը), 2009 թվականի ծրագրային մակարդակը գերազանցում է 340.4 մլն դրամով կամ 1.7 անգամ,
- 28.3 մլն դրամի մեկ ավտոբուս (կազմում է այս խումբ ծախսերի 1.0%-ը), 2009 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 7.7 մլն դրամով կամ 21.4%-ով,
- 19.2 մլն դրամ անվտանգության ապահովման համար հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 0.7%-ը), 2009 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 24.9 մլն դրամով կամ 56.5%-ով:

Հարկ է նշել նաև, որ թեև Բանկի կապիտալ ներդրումների 2010 թվականի սահմանաչափի ավելացումը 2009 թվականի համար օրենքով հաստատվածի նկատմամբ (90.8% առանց իրավաբանական անձանց կապիտալում նախատեսվող մասնակցության) Բանկի 2010 թվականի գործունեության արդյունքների վրա ուղղակի ազդեցություն չի ունենա, սակայն, դրա անուղղակի ազդեցությունն առկա է: Այսպես, Բանկի 2010 թվականին վերը նշված ծավալով կապիտալ ներդրումների կատարումն կհանգեցնի ամորտիզացիոն հատկացումների ծավալի և Բանկի 2010 թվականի գործառնական ծախսերի ավե-

լացմանը և հետևաբար նույն չափով նաև Բանկի 2010 թվականի գործունեության արդյունքում առաջացող վնասի գումարի ավելացմանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ նկատի ունենալով Բանկի վերջին տարիների գործունեության տարեկան արդյունքներով ստացված փաստացի, ինչպես նաև առաջիկա տարիների արդյունքներով Բանկի կողմից ակնկալվող վնասը և Բանկի պահուստների նվազման միտումը, նպատակահարմար է առաջարկել Բանկին մեկ անգամ ևս քննարկել Բանկի 2010 թվականի առաջարկվող ծախսերը (այդ թվում՝ նաև կապիտալ ներդրումների գծով), դրանց ծավալը հնարավորինս կրճատելու նկատառումով: Մասնավորապես, գտնում ենք, որ նման հնարավորություն կա վարչական ծախսերի նախահաշվում (օրինակ՝ Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերի, «Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռք բերում» հոդվածով ֆիլմի և տեսահոլովակների նկարահանմանը վերաբերող ծախսերի գծով):